ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թ., ԿԽ-011/22/3

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 8-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել դատախազների տարեկան վերապատրաստման 2023 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել դատախազների հատուկ ուսուցման 2023 թվականի ծրագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:

Խորհրդի նիստը նախագահող՝ ***Ա. Մանասյան***

Խորհրդի անդամներ՝ ***Ա.Սարգսյան***

Ա. Մարուխյան

Ե. Ավագյան

Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2022 թվականի
դեկտեմբերի 15-ի ԿԽ-011/22/3 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատախազների (այսուհետ՝ Ունկնդիրներ) 2023 թվականի տարեկան վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագրերը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
3. Ծրագրի նպատակն է ապահովել Ունկնդիրների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական կատարելագործումը հետևյալ ոլորտներում՝

ա) Ընդհանուր և հարակից մասնագիտական ոլորտ.

Վերապատրաստման գործընթացը վերաբերում է դատախազի վարքագծի կանոնների և անհամատեղելիության պահանջների, կառավարման հմտությունների և ներազդման հոգեբանության, իրավաբանական գրի և խոսքի մշակույթի, Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի, հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցերի, մեդիա իրավունքի, քրեական գործերով միջազգային համագործակցության, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց հետ վարվեցողության կանոնների հիմնահարցերին, Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի, դատավորների, դատախազների և քննիչների գործունեության միջոցով գենդերային հավասարության ապահովման և այլ ոլորտներում Ունկնդիրների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործմանը:

բ) Հատուկ մասնագիտական ոլորտ.

Վերապատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքի և քրեական դատավարության արդի հարցերի, պետական շահերի պաշտպանության, քաղաքացիական և վարչական դատավարությունների արդի հարցերի, աուդիտորական գործունեության և հաշվապահական հաշվառման հիմնահարցերի, գնումների վերաբերյալ օրենսդրության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության, կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի, կոռուպցիոն հանցանքների որակման, զինվորական հանցագործությունների որակման և քննության մեթոդի-

կայի առանձնահատկությունների, տնտեսական հանցագործությունների որակման, կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունների, խոշտանգումների քրեաիրավական բնութագրի և քննության առանձնահատկությունների, ընտրական հանցագործությունների, կիբեռհանցագործությունների վերաբերյալ գործերի քննության, խոցելի խմբերի նկատմամբ կատարված հանցագործությունների քննության, կալանքի և այլ խափանման միջոցների, անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների, քրեական դատավարությունում զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունների, հարցաքննության մեթոդների և հաղորդակցության կառավարման, քրեական դատավարությունում էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրների և այլ ոլորտներում Ունկնդիրների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործմանը:

գ) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննություն.

Վերապատրաստումը նպատակ է հետապնդում հետևողականորեն կատարելագործելու Ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակություններն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառման և ապացույցների (նախնական) ապահովման, ապացուցման պարտականության բաշխման, դատարանում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ ներպետական և ՄԻԵԴ-ի պրակտիկայի, Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունների, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում միջազգային համագործակցության և արդի այլ ոլորտներում:

դ) Հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացներ.

Վերապատրաստումը վերաբերում է հասարակագիտական ուղղվածության գիտելիքների և հմտությունների ձևավորմանն ու կատարելագործմանը: Մասնավորապես, Ունկնդիրները կընդլայնեն իրենց գիտելիքները և հմտությունները կառավարման հմտությունների և ներազդման հոգեբանության, փաստարկման և հռետորաբանության, ինչպես նաև, քրեական վարույթի ընթացքում անչափահասների իրավունքների պաշտպանության, գենդերով պայմանավորված ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրների, կոռուպցիոն հանցագործությունների և անդրազգային կազմակերպված հանցավորության, կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմի, քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրների և արդյունավետության բարձրացման ուղղությունների, աշխատանքային իրավունքի, միջազգային աշխատանքային իրավունքի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման ոլորտներում:

4. Պարտադիր վերապատրաստման ուսումնառության ժամաքանակը յուրաքանչյուր դատախազի համար կազմում է 80 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է երկու փուլով՝ յուրաքանչյուրը 40 ակադեմիական ժամ (մեկ շաբաթ) տևողությամբ:
5. Ունկնդիրների վերապատրաստումն իրականացվում է ընդհանուր և հարակից, հատուկ մասնագիտական ու հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացների մոդուլների հիման վրա: Հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված դասընթացների շրջանակներում յուրաքանչյուր դատախազ վերապատրաստվում է 40 ակադեմիական ժամ, ինչպես նաև ընդհանուր և հարակից մասնա-

գիտական կամ հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացների մոդուլում ընդգրված դասընթացների շրջանակներում՝ 40 ակադեմիական ժամ ծավալով:

6. Ծրագիրն իրականացվում է առկա և հեռավար ուսուցման ձևերով: Ուսումնառությունը սկսվում է դատախազների կողմից ընտրված առարկայական կուրսերի ցուցակը Ակադեմիա ներկայացնելուց հետո՝ Ակադեմիայի կառավարման խորհրդի հաստատած ժամանակացույցի հիման վրա:
7. Առկա ուսուցման ձևով դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ընտրությունն Ունկնդիրը կատարում է ըստ սույն հավելվածում ներկայացված փաթեթների:
8. Առկա ուսուցման ձևով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում. 2023 թվականի ապրիլ-մայիս ամիսները՝ ընդհանուր և հարակից մասնագիտական, սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները՝ հատուկ մասնագիտական առարկաներով, իսկ հեռավար ուսուցման ձևով՝ 2023 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-G-001-23	Դատախազի վարքագծի կանոններ և անհամատեղելիության պահանջներ	10
2.	P- G-002-23	Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր	4
3.	P- G-003-23	Քրեական գործերով միջազգային համագործակցություն	4
4.	P- G-004-23	Իրավաբանական գիր և խոսքի մշակույթ	2
5.	P- G-005-23	Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր	6
6.	P-G-006-23	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար	4
7.	P-G-007-23	Հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների հիմնահարցեր	4
8.	P-G-008-23	Դատավորների, դատախազների և քննիչների գործունեության միջոցով գենդերային հավասարության ապահովման հիմնահարցեր	6
9.	P-G-009-23	Մեդիա իրավունք և հաղորդակցման հմտություններ	8
10.	P-G-010-23	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	4

29.	P-CR-019-23	Քաղաքացիական դատավարության արդի հարցեր	10
30.	P-CR-020-23	Վարչական դատավարության արդի հարցեր	6
31.	P-CR-021-23	Աուդիտորական գործունեության և հաշվապահական հաշվառման հիմնահարցեր	6
32.	P-CR-022-23	Գնումների վերաբերյալ օրենսդրության հիմնահարցեր	6

3. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
33.	P-CV-001-23	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հիմնահարցեր	12
34.	P-CV-002-23	Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը	8
35.	P-CV-003-23	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում	10
36.	P-CV-004-23	ՀՀ վերաքննիչ, վճռաբեկ և ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ	6
37.	P-CV-005-23	Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում	4

4. Հեռավար ուսուցման ձևով իրականացվող դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
38.	P-D-001-23	Փաստարկում և հռետորաբանություն	40
39.	P-D-002-23	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	40
40.	P-D-003-23	Անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական վարույթի ընթացքում	40
41.	P-D-004-23	Երեխաների նկատմամբ բռնության քննության առանձնահատկությունները	40

42.	P-D-005-23	Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղղությունները	40
43.	P-D-006-23	Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը	40
44.	P-D-007-23	Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները	40
45.	P-D-008-23	Միջազգային աշխատանքային իրավունք	40
46.	P-D-009-23	Աշխատանքային իրավունք	40
47.	P-D-010-23	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում	40

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. P-G-001-23. Դատախազի վարքագծի կանոններ և անհամատեղելիության պահանջներ

Դասընթացը պայմանավորված է Ունկնդիրների՝ դատախազի վարքագծի կանոնների հետ կապված գիտելիքների և հմտությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատախազական գործունեություն իրականացնելիս և ոչ դատախազական գործունեության ընթացքում դատախազի վարքագծի կանոնների, դատախազների էթիկայի հարցերով վարույթի հետ կապված հարցերը և անհամատեղելիության պահանջները:

2. P-G-002-23. Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ ազգային օրենսդրության կիրառման կարողությունների զարգացման ու կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- խտրականության արգելքի և հավասարության ապահովման վերաբերյալ միջազգային պայմանագրերի ուսումնասիրություն,
- խտրականության առանձին ձևերի ուսումնասիրություն,
- միջազգային և ներպետական պրակտիկայում առկա իրավական հիմնախնդիրների վերհանում և քննարկում:

3. P-G-003-23. Քրեական գործերով միջազգային համագործակցություն

Դասընթացը պայմանավորված է քրեական գործերով քննության բնագավառում միջազգային համագործակցության հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ միջազգային պայմանագրերով նախատեսված միջազգային համագործակցության տեսակների, եղանակների, սուբյեկտների, պայմանների վերաբերյալ հարցերը:

4. P-G-004-23. Իրավաբանական գիր և խոսքի մշակույթ

Դասընթացը պայմանավորված է համոզիչ իրավական վերլուծությունների կատարման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտներում կարողությունների և գործնական հմտությունների ձևավորման, կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- իրավավերլուծական ռազմավարությունների ընտրության հետ կապված գործնական հարցերը,
- օրենսդրական և նախադեպային տեքստերի հետ աշխատանքում իրավամեկնաբանողական հնարքների և տեխնիկայի կիրառման հետ կապված գործնական հարցերը,
- փաստաթղթերի կազմման հմտությունները (իրավական լեզու, իրավական մտքի ձևակերպում, փաստերի, ապացույցների, իրավանորմերի շարադրանք),
- դատախազի խոսքի մշակման հմտություններ:

5. P-G-005-23. Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների, դրանց դեմ տարվող պայքարի ընդհանուր իրավիճակի, կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում իրականացվող հիմնական աշխատանքների և դրանց արդյունքների, հակակոռուպցիոն պայքարի իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների, կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների իրավասության և գործունեության, պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը:

6. P-G-006-23. Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար

Դասընթացն ուղղված է գենդերի հիմքով բռնության դեմ պայքարին առնչվող հարցերի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, տվյալ բնագավառում գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու կատարելագործմանը:

Դասընթացն ընդհանուր գիտելիքներ կապահովի կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերի և գենդերի հիմքով բռնության, ՀՀ-ում դրա տարածվածության և բռնության նկատմամբ վերաբերմունքի հետ կապված հիմնահարցերի մասին, ինչպես նաև ընդհանուր պատկերացում կտա համապատասխան միջազգային գործիքակազմի և կիրառելի ստանդարտների վերաբերյալ:

Դասընթացի շրջանակում անդրադարձ կկատարվի զոհի անվտանգությունն ապահովելու նպատակով անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների իրականացմանը, ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ հաշտարարության հիմնահարցերին, միջգերատեսչական համագործակցության ստանդարտներին, քրեական վարույթի առանձնահատկություններին՝ գործի քննությունից մինչև դատավճռի կայացման փուլն ընկած ողջ ժամանակահատվածում:

7. P-G-007-23. Հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների հիմնահարցեր

Դասընթացը պայմանավորված է հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների հիմնահարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և գործնական հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների մասին դրույթների քննարկումը, առկա խնդիրների վերհանումը, դրանց լուծման ուղղությունների մշակումը, ինչպես նաև նշված անձանց իրավունքների մասին միջազգային և ներպետական օրենսդրական ոլորտի ուսումնասիրությունը:

8. P-G-008-23. Դատավորների, դատախազների և քննիչների գործունեության միջոցով գենդերային հավասարության ապահովման հիմնահարցեր

Դասընթացը պայմանավորված է գենդերային հավասարության ապահովման ոլորտում Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը նպատակ ունի Ունկնդիրներին ծանոթացնել գենդերի հիմքով խտրականության բացառմանը և գենդերային հավասարությանը, գենդերային կարծրատիպերին և կանխակալությանը, գենդերային հավասարության ապահովմանն առնչվող միջազգային, տարածաշրջանային և ազգային իրավական դաշտին:

Դասընթացը ներառում է զբաղվածության իրավունքի և ընտանեկան իրավունքի մեջ գենդերային հավասարության ապահովման առանձնահատկությունները, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության և քրեական արդարադատության ոլորտներում գենդերային հավասարության ապահովմանը վերաբերող հիմնախնդիրները:

9. P-G-009-23. Մեդիա իրավունք և հաղորդակցման հմտություններ

Դասընթացն ուղղված է զանգվածային լրատվության միջոցների հետ և այլ հանրային շփումներում, ինչպես նաև մեդիա և տեղեկատվական դաշտի իրավական կարգավորումների վերաբերյալ Ունկնդիրների ակադեմիական և գործնական գիտելիքների և փորձառության ընդլայնմանն ու հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացի շրջանակներում կքննարկվեն հանրության և զանգվածային լրատվության միջոցների հետ դատախազի հաղորդակցությանն առնչվող հարցերը և մեդիայի հետ կապված արդի զարգացումները, մեդիա իրավունքին առնչվող հիմնահարցերը, ինչպես նաև կուսումնասիրվի մեդիա ոլորտում միջազգային փորձը:

10. P-G-010-23. Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է կառավարման և առաջնորդության, ժամանակի կառավարման, ինչպես նաև հոգեբանական ազդեցության, դրա տեսակների, մեթոդների, մեխանիզմների և տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է՝

- կառավարչական հմտություններն ու առաջնորդման ոճերը,
- արդյունավետ պլանավորումը,
- թիմի ձևավորումը և թիմային աշխատանքի կազմակերպումը,
- ներազդման հոգեբանության հիմնական հասկացությունները, ներազդման տեսակները, մեթոդներն ու մեխանիզմները,
- կառուցողական (համոզում, ներշնչում և այլն) և ոչ կառուցողական (մանիպուլյացիա և այլն) ներազդման մեթոդների առանձնահատկությունները,
- կառուցողական և ոչ կառուցողական ներազդմանը դիմակայելու եղանակները:

11. P-CR-001-23. Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա

Դասընթացը պայմանավորված է կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հանցագործությունների քննության ընդհանուր մեթոդաբանությունը, հանցագործության մեխանիզմի հասկացությունը, առաջացման օրինաչափությունները, քրեագիտական դիագնոստիկան, ապացույցների ամրագրման տեխնիկա-քրեագիտական մեթոդները և ձևերը, քրեագիտական լուսանկարահանումը և տեսաձայնագրումը, առանձին քննչական գործողությունների (քննչական փորձարարություն, ճանաչման ներկայացնել, խուզարկություն, նմուշներ ստանալ, հարցաքննություն և այլն) կատարման տակտիկային, ինչպես նաև հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկային վերաբերող հարցերը: Մասնավորապես՝ սպանության, ինքնասպանության դեպքերի, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների, տրանսպորտային հանցագործությունների, ընտրական հանցագործությունների, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, անչափահասների կողմից կատարված հանցագործությունների, կիբեռհանցագործությունների քննության մեթոդիկայի, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները:

12. P-CR-002-23. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության հիմնախնդիրներ

Դասընթացը պայմանավորված է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարման ոլորտում դատախազական գործառույթների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարման նկատմամբ դատախազական հսկողության, քրեակատարողական ոլորտի վերաբերյալ հարցերը՝ ՀՀ օրենսդրության, ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի, ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների համատեքստում:

Մասնավորապես՝

- դատախազի՝ ազատությունից զրկված անձանց պահելու վայրեր այցելելու նպատակներն ու կարգը,
- ազատությունից զրկված կամ ազատությունը սահմանափակված անձանց հիմնական իրավունքներին վերաբերող իրավական ակտերի օրինականության ստուգումը և անօրինական ակտերի նկատմամբ դատախազական ներգործության միջոցները,
- պատժի ենթարկված անձանց հարցման ենթարկելու, տեղեկատվություն ստանալու և բացատրություններ վերցնելու հիմքերը և կարգը,
- ապօրինի պահվող անձանց ազատ արձակելու հիմքերը և կարգը,
- ՀՀ դատախազության կոլեգիայի վերաբերելի որոշումները:

13. P-CR-003-23.ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողությունները զարգացնելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝
- ՀՀ քրեական նոր օրենսգրքի հիմնադրույթները,
- հանցագործությունների որակման իմացաբանական հիմունքները,
- ըստ հանցակազմի տարրերի հանցագործությունների որակման առանձնահատկությունները,
- չավարտված հանցանքի և հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքերում արարքների որակման հիմնախնդիրները,
- հանցագործությունների բազմակիության դեպքում հանցավոր արարքների որակման և եզակի բարդ հանցագործություններից դրանց սահմանազատման հիմնախնդիրները,
- քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
- հանցակցությամբ կատարվող հանցագործությունների որակման հիմնախնդիրները
- բլանկետային նորմերով և արժեքավորվող հատկանիշներով նկարագրված հանցագործությունների որակման առանձնահատկությունները,
- ատելության շարժառիթով հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
- արարքի հանցավորությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը բացառող հանգամանքները,
- պատժի ինստիտուտին և պատիժ նշանակելուն առնչվող հարցերը,
- ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնախնդիրները և դրանց լուծման ոլորտում օրենսդրական ու իրավակիրառ փորձը,
- իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմնահարցերը,
- Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (ՄԱԿ Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքներն ու դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը,

Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան և այլն),
- քրեական իրավունքի ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումներն ու ՀՀ նկատմամբ դրանց կիրառման հարցերը,
- քրեական իրավունքի ոլորտում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները,
- ՀՀ դատախազության կոլեգիայի վերաբերելի որոշումները:

14. P-CR-004-23. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումների, վիճահարույց հարցերի շուրջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների մատուցման, դրանք գործնականում կիրառելու, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման և դրանց նկատմամբ դատախազական հսկողության ապահովման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝
- ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումները, տեխնիկական միջոցների կիրառման կարգի վերաբերյալ նոր իրավակարգավորումները, ձերբակալման իրավաչափության բողոքարկման ինստիտուտը, մասնավոր գանգատի գործերի շրջանակի փոփոխությունը, մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթը քրեական դատավարությունում, համաձայնեցման և համագործակցության վարույթները քրեական դատավարությունում,
- ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները,
- մինչդատական վարույթի դատական երաշխիքները,
- քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի առանձնահատկությունները,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- քրեական դատավարության ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների և ՀՀ նկատմամբ դրանց կիրառման հարցերը,
- քրեական դատավարության ոլորտում ՀՀ վճաբեկ դատարանի կողմից կայացված որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները,
- արդար դատաքննության իրավունքի ապահովման արդի հիմնախնդիրները,
- քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը և նախաքննության ընթացքում քննիչների կողմից թույլ տրվող խախտումները,
- առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և քրեագիտական առանձնահատկությունները,
- դատավարական հարկադրանքի միջոցները,
- օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ դատախազական հսկողության հիմնախնդիրները,
- ապացույցների և ապացուցման գործընթացի խնդիրները,

- պետական, նոտարական և բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը,
- քաղաքացիական հայցի լուծման և դատական ծախսերի վերականգնման հիմնախնդիրները քրեական դատավարությունում,
- հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) հիմնախնդիրները քրեական դատավարությունում,
- ՀՀ դատախազության կոլեգիայի վերաբերելի որոշումները:

15. P-CR-005-23.Հարցաքննության մեթոդներ և հաղորդակցության կառավարում

Դասընթացը պայմանավորված է հաղորդակցության կառավարման համատեքստում հարցաքննության մեթոդների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝
- հաղորդակցության ընդհանուր տեսանկյունները (թե՛ խոսքային և թե՛ ոչ խոսքային, բանավոր և գրավոր, լսող կողմի ընկալմանը նպաստող մեթոդներ, արդյունավետ ունկնդրում),
- հաղորդակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ,
- հաղորդակցությունը վկաների հետ,
- հաղորդակցությունը զոհերի հետ,
- հաղորդակցությունը մեղադրյալի հետ,
- հաղորդակցությունը փաստաբանների և դատավարության մյուս մասնակիցների հետ,
- հաղորդակցությունը անչափահասների հետ (ինչպես հարցեր տալ, ինչպես ստանալ արժանահավատ տեղեկություններ),
- հաղորդակցությունը փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ,
- միջմշակութային հաղորդակցությունը:

16. P-CR-006-23.Զինվորական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ կիրառման, քննության մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար: Դասընթացը պայմանավորված է նաև զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության ոլորտում կրիմինալիստիկական գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝
- զինվորական հանցագործություններ նախատեսող հանցակազմերի մանրամասն ներկայացումը՝ ՀՀ քրեական գործող օրենսգրքի և նոր օրենսգրքի համատեքստում,
- զինվորական կարգապահության խախտումների և զինվորական հանցագործությունների տարանջատման հարցերը, մասնավորապես՝ նույն արարքի համար կրկին պատասխանատվության չենթարկվելու սկզբունքի տեսանկյունից,
- զինվորական հանցագործությունների ընդհանուր և որակյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունները,
- զինվորական հանցագործությունների քննության մեթոդիկայի առանձնահատկությունները,

- վատ վերաբերմունքի վերաբերյալ իրականացվող արդյունավետ քննության էությունը,
- Մարդու իրավունքների՝ վատ վերաբերմունքին վերաբերող եվրոպական չափանիշները, այդ համատեքստում արդյունավետ քննությունը,
- զինված ուժերի համատեքստում վատ վերաբերմունքի վերաբերյալ արդյունավետ քննություն կատարելու միջազգային լավագույն փորձը,
- Մարդու իրավունքների՝ վատ վերաբերմունքին վերաբերող եվրոպական չափանիշների վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը,
- ՀՀ դատախազության կոլեգիայի վերաբերելի որոշումները:

17. P-CR-007-23. Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր

Դասընթացն ուղղված է տնտեսական հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ կիրառման վերաբերյալ գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացը ներառում է՝

- տնտեսական հանցագործությունների մանրամասն ներկայացումը՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի համատեքստում,
- վարչական իրավախախտումների և տնտեսական հանցագործությունների տարանջատման հարցերը, մասնավորապես՝ նույն արարքի համար կրկին պատասխանատվության չենթարկվելու սկզբունքի տեսանկյունից,
- տնտեսական հանցագործությունների ընդհանուր և որակյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունները,
- ՀՀ դատախազության կոլեգիայի վերաբերելի որոշումները:

18. P-CR-008-23.Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է կոռուպցիոն դեպքերի քննությանն առնչվող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացի շրջանակում քննարկվելու են կոռուպցիոն դեպքերի քննության առանձնահատկությունները, դատախազության և դատախազական հսկողության դերակատարությունը կոռուպցիայի դեմ պայքարում: Ուսումնասիրվելու են կոռուպցիոն հանցագործությունների պատճառները և հետևանքները, կոռուպցիայի դեմ պայքարի ազգային և միջազգային փորձը, կոռուպցիայի դեմ պայքարի իրավական և կազմակերպական հիմքերը (ՀՀ և միջազգային):

19. P-CR-009-23.Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման օրենսդրական պահանջների, միջազգային չափանիշների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը, որակման առանձնահատկությունները, հարակից հանցակազմերից սահմանազատելու հիմնահարցերը, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները, ինչպես նաև դրա կանխարգելման, արձանագրման և արդյունավետ բացահայտման Ստամբուլի արձանագրության չափանիշներին համապատասխան

խոշտանգումների ու վատ վերաբերմունքի հետքերի փաստագրման վերաբերյալ հարցերը, խոշտանգումների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան:

20. P-CR-010-23. Կալանքի և այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը

Դասընթացն անհրաժեշտ է կալանք և այլ խափանման միջոցներ կիրառելու դեպքերի վերաբերյալ ազգային և միջազգային փորձի ուսումնասիրության, այս ոլորտում անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների կատարելագործման, գործնական խնդիրների վերհանման և փորձի փոխանակման համար:

Դասընթացի շրջանակում ուսումնասիրման առարկա կդառնան ազատության սահմանափակման հիմքերը, ազատությունից զրկված անձանց համար նախատեսված երաշխիքները, կներկայացվեն կալանքի օրինականության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

Դասընթացը ներառում է այլ խափանման միջոցների համակարգը (միջազգային չափանիշներ, ՄԻԵԴ-ի վճիռներ), ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով նախատեսված խափանման միջոցները, օտարերկրացիների նկատմամբ այլ խափանման միջոցների կիրառման առանձնահատկությունները:

21. P-CR-011-23. Անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանություն

Դասընթացն անհրաժեշտ է անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանության ոլորտում գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև իրավական նոր դիրքորոշումները Ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացի շրջանակում կքննարկվեն.

- անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները,
- անչափահասների և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթի սկզբունքային առանձնահատկությունները, ներպետական օրենսդրական կարգավորումները և միջազգային փորձը,
- անչափահասների և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկությունները,
- ապացուցման գործընթացի առանձնահատկությունները,
- անչափահաս և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների մասնակցությունը քննչական և դատավարական գործընթացներին,
- օրինական ներկայացուցչի և պաշտպանի մասնակցությունը անչափահաս և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթին:

22. P-CR-012-23. Ընտրական հանցագործությունների որակման առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է անձի ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ կիրառման, քննության մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքները և հմտությունները կատարելագործելու ու պրակտիկայում դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է.

- անձի ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերը,

- անձի ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկությունները, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնահարցերը,
- ընտրական հանցագործությունների վերաբերյալ գործերի նկատմամբ դատախազական հսկողության հիմնախնդիրները:

23. P-CR-013-23. Պետական շահերի պաշտպանության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է պետական շահերի պաշտպանության հարցերով քաղաքացիական և վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է՝

- պարտավորական իրավահարաբերությունները ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների համատեքստում,
- հաշվապահական հաշվառման իրավական կարգավորումներն ու հիմնախնդիրները,
- հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկման իրավական կարգավորումներն ու հիմնախնդիրները,
- վարչարարության, վարչական վարույթի, վարչական և քաղաքացիական դատավարությունների հարաբերակցության հիմնահարցերը,
- «Սնանկության մասին» ՀՀ օրենքի կիրարկմանն առնչվող հիմնահարցերը,
- քաղաքացիական և վարչական դատավարությունում դատախազի մասնակցության հիմքերը,
- պետական տուրքի և դատական ծախսերի հաշվարկման ու գանձման առանձնահատկությունները,
- ՀՀ դատախազության կոլեգիայի վերաբերելի որոշումները:

24. P-CR-014-23. Խոցելի խմբերի նկատմամբ կատարված հանցագործությունների քննության առանձնահատկությունները

Դասընթացի նպատակն է խոցելի խմբերի նկատմամբ կատարված հանցագործությունների քննության առանձնահատկությունների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնումը:

Դասընթացը ներառում է՝

- երեխայի նկատմամբ բռնության հասկացությունը, տեսակները, հանցավոր դրսևորումների քրեական բնութագիրը և քննության առանձնահատկությունները,
- բռնության ենթարկված երեխայի հարցաքննության առանձնահատկությունները,
- երեխայի նկատմամբ բռնության հոգեկան հետևանքները և հակազդման առանձնահատկությունները,
- երեխայի նկատմամբ բռնության դեպքերի քննության առանձնահատկությունները քննության սկզբնական և հետագա փուլերում (մեթոդիկան և տակտիկան),
- երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները դատական քննության փուլում, օրինական ներկայացուցչի, մանկավարժի և մասնագետի (հոգեբանի) մասնակցությունը քրեական գործերով վարույթին՝ որպես երեխայի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիք,
- երեխայի նկատմամբ բռնության դեպքերի քննության ընթացքում միջոլորտային և միջգերատեսչական համագործակցությունն ու դրա ձևերը,
- գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննության առանձնահատկությունները,

- ՀՀ քրեական օրենսդրությամբ սեքսուալ հետապնդման և սեքսուալ չարաշահումների (շահագործման) համար քրեական պատասխանատվություն առաջացնող արարքները՝ որպես գենդերային հանցագործություններից պաշտպանության տարատեսակներ, այս հանցագործությունների քննության մեթոդիկայի, քննության տակտիկայի, քրեական հետապնդման առանձնահատկությունները,
- խոցելի այլ խմբերի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները, համապատասխան օրենսդրության և վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը:

25. P-CR-015-23. Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում

Դասընթացն անհրաժեշտ է ցանկացած տեսակի, այդ թվում՝ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության ընթացքում էլեկտրոնային ապացույցների հավաքման, ստուգման, գնահատման ու կիրառման համալիր հարցերի կապակցությամբ գիտելիքներ հաղորդելու և ապացուցման գործընթացում դրանց տակտիկապես գրագետ կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է «Կիբեռհանցագործությունների մասին» ԵԽ Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ նորմերի՝ ՀՀ քրեական օրենսգրքում իմպլեմենտացման խնդիրները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացուցման գործընթացի հիմնախնդիրները, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները, խնդրո առարկայի վերաբերյալ ՄԻԵԴ-ի, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև այս ոլորտում միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

26. P-CR-016-23. Կիբեռհանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունները

Դասընթացի նպատակն է կիբեռհանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունների շուրջ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնումը:

Դասընթացը ներառում է՝
- կիբեռհանցագործությունների վերաբերյալ օրենսդրության արդի հիմնախնդիրները,
- կիբեռհանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության անհրաժեշտությունը,
- կիբեռհանցագործության քննության արդյունավետ միջոցները,
- գաղտնի քննչական գործողությունները,
- կիբեռհանցագործությունների վերաբերյալ քրեական օրենսդրությունը և վերաբերելի այլ իրավական ակտերը:

27. P-CR-017-23. Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր

Դասընթացն անհրաժեշտ է կոռուպցիոն հանցանքների որակման վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝ ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցերը, դիսպոզիտիվ հատկանիշները, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնախնդիրները:

28. P-CR-018-23. Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում

Դասընթացը պայմանավորված է քրեական դատավարությունում զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունների, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ու ապահովման վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քրեական դատավարությունում զոհի իրավական կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները,
- զոհերի համար ընթացակարգային երաշխիքները,
- զոհերի պաշտպանությունը և նրանց աջակցության տրամադրումը (երկրորդային վիկտիմիզացման կանխարգելում, պաշտպանություն ապաբեկումից, վրեժխնդրությունից և այլն),
- զոհերի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի ապահովումը,
- զոհերին փոխհատուցումը,
- զոհերի քաղաքացիական հայցի ապահովումը քրեական դատավարությունում,
- ընթացակարգային հարմարությունները խոցելի զոհերի համար (խոցելի զոհերի բացահայտում, երեխաներ, հաշմանդամություն ունեցող զոհեր, սեռական հանցագործությունների զոհեր, մարդկանց թրաֆիկինգի զոհեր և այլն):

29. P-CR-019-23. Քաղաքացիական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներդրված նոր ինստիտուտները և իրավակարգավորումները ներկայացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ապացուցման հիմնահարցերը,
- դատաքննության հիմնահարցերը,
- դատավարական ժամկետները,
- հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման և նախնական ապահովման առանձնահատկությունները,
- հակընդդեմ հայցը և դրա չներկայացման դատավարական հետևանքները,
- կատարողական վարույթի առանձնահատկությունը քաղաքացիական դատավարությունում,
- նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի բողոքարկման առանձնահատկությունները:

30. P-CR-020-23. Վարչական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝ ապացուցման հիմնահարցերը, դատաքննության հիմնահարցերը, դատավարական ժամկետները, հայցի ապահովման հիմնահարցերը, նոր և

նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի բողոքարկման առանձնահատկությունները:

31. P-CR-021-23. Աուդիտորական գործունեության և հաշվապահական հաշվառման հիմնահարցեր

Դասընթացն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության հետ կապված հարաբերությունների, հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող և հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմինների, վերջիններիս գործունեության և այլ հիմնահարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու համար:

32. P-CR-022-23. Գնումների վերաբերյալ օրենսդրության հիմնահարցեր

Դասընթացն անհրաժեշտ է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունների, այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքների և պարտականությունների, գնումների վերաբերյալ օրենսդրության, գնումների կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու համար:

33. P-CV-001-23. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հիմնահարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում առկա խնդրահարույց հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացը ներառում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը կարգավորող օրենսդրության կիրառման հետ կապված հարցերը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հատուկ նորմերը և դրանց հարաբերակցությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգավորումների հետ:

34. P-CV-002-23. Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը

Դասընթացն անհրաժեշտ է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում հայցի նախնական ապահովման միջոցների և ապացույցների ապահովման, ապացուցման պարտականության բաշխման շուրջ առկա խնդրահարույց հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդարձվեն հայցի ապահովման, հայցի նախնական ապահովման միջոցների, ինչպես նաև ապացուցման պարտականության բաշխման հետ կապված հարցերը:

35. P-CV-003-23. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում

Դասընթացն անհրաժեշտ է դատարանում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդարձվեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջների քննության ժամանակ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոնների առանձնահատկությունները, հայցադիմումի ներկայացման, հայցի հիմքի և (կամ) առարկայի լրացման, հակընդդեմ հայցի ներկայացման, հաշտության համաձայնության, գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի և այլ հարցերի շուրջ գործնականում հանդիպող խնդիրները:

36. P-CV-004-23. ՀՀ վերաքննիչ, վճռաբեկ և ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ

Դասընթացն անհրաժեշտ է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ ՄԻԵԴ-ի և ներպետական դատական ատյանների պրակտիկան Ունկնդիրներին ներկայացնելու և այդ ոլորտում նրանց գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացի շրջանակներում քննարկման առարկա կդառնան Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների նախադեպային պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում:

37. P-CV-005-23. Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում

Դասընթացն անհրաժեշտ է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման և միջազգային համագործակցության պրակտիկան Ունկնդիրներին ներկայացնելու և այդ ոլորտում նրանց գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացի շրջանակներում քննարկման առարկա կդառնան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում միջազգային համագործակցության գործիքակազմը, համագործակցության կանոնները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները:

38. P-D-001-23. Փաստարկում և հռետորաբանություն

Դասընթացը պայմանավորված է ապացուցման, հերքման, հիմնավորման, զրուցակիցների մոտ համոզմունքի ձևավորման, տպավորիչ ելույթի ու արդյունավետ բանավեճի տեխնոլոգիաների տիրապետման, դրանց ճիշտ կիրառման գործնական հմտությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է փաստարկման գործընթացի բաղադրիչները, եղանակները, փաստարկման համակարգին ներկայացվող պահանջները, ավանդական և ժամանակակից հռետորիկայի զինանոցը, առավել հաճախ հանդիպող սխալները, բանավեճի ընթացքում կիրառվող կառուցողական և ապակառուցողական տեխնոլոգիաները և վերջիններիս չեզոքացման մեթոդաբանական սկզբունքները:

39. P-D-002-23. Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է կառավարման և առաջնորդության, ինչպես նաև հոգեբանական ազդեցության, դրա տեսակների, մեթոդների, մեխանիզմների և տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է՝

- կառավարչական հմտություններն ու առաջնորդման ոճերը,
- արդյունավետ պլանավորումը,
- թիմի ձևավորումը և թիմային աշխատանքի կազմակերպումը,
- ներազդման հոգեբանության հիմնական հասկացությունները, ներազդման տեսակները, մեթոդներն ու մեխանիզմները,
- կառուցողական (համոզում, ներշնչում և այլն) և ոչ կառուցողական (մանիպուլյացիա և այլն) ներազդման մեթոդների առանձնահատկությունները,
- կառուցողական և ոչ կառուցողական ներազդմանը դիմակայելու եղանակները:

40. P-D-003-23. Անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական վարույթի ընթացքում

Դասընթացը պայմանավորված է անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ քրեաիրավական մասնագիտացում ունեցող դատավորների գիտելիքների ծավալի ընդլայնման և գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Այն ներառում է միջազգայնորեն ճանաչված՝ անչափահասի լավագույն շահի սկզբունքի բովանդակության բացահայտումը և դրանով պայմանավորված՝

- միջազգային պայամանագրերի, ներպետական օրենսդրության և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներն ու պրակտիկայում կիրառման առանձնահատկությունները,
- անչափահասների նկատմամբ քրեաիրավական և քրեադատավարական առանձին ինստիտուտների կիրառման և նրանց մասնակցությամբ քրեական վարույթի առանձնահատկությունները (մասնավորապես՝ անչափահաս կասկածյալների, մեղադրյալների նկատմամբ խափանման միջոցների կիրառման, այդ թվում՝ ազատությունից զրկելու հետ կապված, նրանց պաշտպանության, հակընդդեմ հարցման իրավունքի, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված այլ իրավունքների ապահովման և իրականացման հիմնահարցերը),
- անչափահասների նկատմամբ իրականացվող պատժողական քաղաքականության, այդ թվում՝ պատիժների կատարման հիմնահարցերը (մասնավորապես՝ անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների համակարգի, պատիժների նշանակման և կատարման առանձնահատկությունները, այդ թվում՝ պրոբացիայի ինստիտուտի ներդրման պայմաններում),
- անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ քրեական վարույթների առանձնահատկությունները,
- անչափահաս տուժողների և վկաների պաշտպանությունը՝ միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենսդրության համաձայն,
- սոցիալական աշխատողների և այլ մասնագետների դերակատարությունը՝ իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների վերականգնման գործում:

41. P-D-004-23. Երեխաների նկատմամբ բռնության քննության առանձնահատկությունները

Դասընթացը նպատակ ունի հետևողականորեն կատարելագործել Ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և ունակությունները բռնության հասկացության և դրսևորումների, դրանց համար նախատեսված քրեական պատասխանատվության առանձնահատկությունների, ինչպես նաև ՀՀ-ում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության համակարգի, դրանում իրենց ակտիվ մասնակցությունն ունեցող դերակատարների ու նրանց գործառույթների, անչափահաս տուժողների մասնակցությամբ վարույթի իրականացման ինչպես ներպետական օրենսդրությամբ ամրագրված, այնպես էլ միջազգային փաստաթղթերում նախատեսված հիմնարար սկզբունքների, պահանջների, հիմնախնդիրների, ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված անչափահաս տուժողների իրավունքների ապահովման կառուցակարգերի, քրեական գործի քննության տարբեր փուլերում և քննչական կամ դատավարական գործողություններ կատարելիս և որոշումներ ընդունելիս:

Դասընթացի նպատակն է նաև ապահովել երեխաների մասնակցությամբ վարույթի արդյունավետության բարձրացման ուղղությունների վերաբերյալ բազմակողմանի գիտելիքների և տեղեկությունների ստացման վերաբերյալ, որոնց կիրառումն անհրաժեշտ է երեխաների մասնակցությամբ դատավարության արդյունավետ իրականացման համար:

42. P-D-005-23. Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղղությունները

Դասընթացը նպատակ ունի Ունկնդիրներին ապահովել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նոր ինստիտուտների և կարգավորումների, ինչպես նաև քաղաքացիական դատավարության արդյունավետության բարձրացման ուղղությունների վերաբերյալ բազմակողմանի գիտելիքներով և տեղեկություններով, որոնց կիրառումն անհրաժեշտ է արդարադատությունն արդյունավետ իրականացնելու համար:

43. P-D-006-23. Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը

Դասընթացը նպատակ ունի հետևողականորեն կատարելագործել Ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և ունակությունները կոռուպցիոն հանցագործությունների և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Դասընթացը ներառում է քննարկումներ կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի, սուբյեկտի, կոռուպցիոն վարքագծի արդյունքում ստացված գույքի/օգուտի քրեաիրավական ճակատագրի, կոռուպցիոն հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելու նախապայմանների, կոռուպցիոն հանցագործության դեպքով քրեական գործ հարուցելու դատավարական խնդիրների, կոռուպցիոն հանցավորության դեմ պայքարի կազմակերպաիրավական նախադրյալների, կոռուպցիոն առանձին հանցագործություններով ապացուցման բեռի բաշխման առանձնա-

հատկությունների, կոռուպցիոն հանագործության վերաբերյալ քրեական գործով վարույթում ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքների և իրավաչափ շահերի ապահովման դատավարական երաշխիքների, անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական կառուցակարգերի և միջազգային իրավական փոխօգնության մեխանիզմների, կոռուպցիոն հանցագործության վերաբերյալ քրեական գործով ապացույցների հավաքման հիմնական դատավարական միջոցների. քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերաբերյալ:

44. P-D-007-23. Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները

Դասընթացը նպատակ ունի հետևողականորեն կատարելագործել Ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և ունակությունները գենդերով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական կառուցակարգերի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Դասընթացը ներառում է քննարկումներ անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի համակարգի, նրանց նկատմամբ պատիժ նշանակելու հիմնախնդիրների, անչափահասներին պատժից ազատելու առանձնահատկություններին, նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունների, անչափահասների հանդեպ կատարվող սեքսուալ ոտնձգությունների և ընտանեկան բռնության դրսևորումների, քրեական դատավարության օրենսդրության մեջ և գենդերով պայմանավորված և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի քննության վարույթում կարծրատիպերի ազդեցության, անչափահասների իրավաչափ շահերի ապահովման դատավարական երաշխիքների, երեխայի լավագույն շահի ապահովման համատեքստում անչափահասներին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի դատավարական առանձնահատկությունների, «Ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտպանության միջոցների՝ ընտանեկան բռնության վերաբերյալ գործերի քննության քրեադատավարական գործիքակազմի հետ հարաբերակցության վերաբերյալ:

45. P-D-008-23. Միջազգային աշխատանքային իրավունք

Դասընթացն անհրաժեշտ է աշխատանքային իրավունքի ոլորտում առկա միջազգային իրավական ակտերի և միջազգային համագործակցության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև այդ կապակցությամբ իրավական նոր դիրքորոշումները Ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացը ներառում է միջազգային աշխատանքային իրավահարաբերությունների, դրանց առանձնահատկությունների արդի հարցերը, աշխատանքային իրավունքի ոլորտում արտասահմանյան երկրների միջազգային փորձը, աշխատանքային իրավունքի ոլորտում առկա միջազգային իրավական ակտերի և կիրառելի իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը:

46. P-D-009-23. Աշխատանքային իրավունք

Դասընթացն անհրաժեշտ է ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև այդ կապակցությամբ իրավական նոր դիրքորոշումներն Ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացը ներառում է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, դադարման, աշխատանքային իրավահարաբերությունների կողմերի իրավունքների, պատասխանատվության, աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության և վերահսկողության հարցերը, դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

47. P-D-010-23. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում

Դասընթացը պայմանավորված է ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին մասնակցության արդյունավետության և ՄԻԵԿ չափանիշների՝ ներպետական օրենսդրության մեջ ներդնելու, հետագայում՝ ՄԻԵԴ-ի արձանագրած խախտումները կանխելու կամ բացառելու տեսանկյունից դատավորների գիտելիքների ծավալի ընդլայնման և գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացի ավարտին Ունկնդիրը գիտելիքներ կունենա ՄԻԵԴ վճիռների կատարման՝

- գործընթացի վերաբերյալ,
- ապահովման իրավական գործիքների և կառուցակարգերի վերաբերյալ,
- նկատմամբ վերահսկողության վերաբերյալ,
- գործընթացի ԵԽ կառուցակարգերի և դերակատարների վերաբերյալ,
- գործընթացի ներպետական կառուցակարգերի և դերակատարների վերաբերյալ:

IV. ՓԱԹԵԹՆԵՐ
ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-G-001-23	Դատախազի վարքագծի կանոններ և անհամատեղելիության պահանջներ	10
2.	P-G-009-23	Մեդիա իրավունք	8
3.	P-G-002-23	Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր	4
4.	P-G-005-23	Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր	6
5.	P-G-010-23	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	4
6.	P-G-006-23	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար	4
7.	P-G-003-23	Քրեական գործերով միջազգային համագործակցություն	4

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-G-001-23	Դատախազի վարքագծի կանոններ և անհամատեղելիության պահանջներ	10
2.	P-G-009-23	Մեդիա իրավունք	8
3.	P-G-005-23	Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր	6
4.	P-G-004-23	Իրավաբանական գիր և խոսքի մշակում	2
5.	P-G-007-23	Հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների հիմնահարցեր	4
6.	P-G-008-23	Դատավորների, դատախազների և քննիչների գործունեության միջոցով գենդերային հավասարության ապահովման հիմնահարցեր	6
7.	P-G-003-23	Քրեական գործերով միջազգային համագործակցություն	4

2. ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-CR-003-23	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	10
2.	P-CR-004-23	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	10
3.	P-CR-006-23	Զինվորական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները	4
4.	P-CR-002-23	Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության հիմնախնդիրներ	6
5.	P-CR-011-23	Անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանություն	6
6.	P-CR-005-23	Հարցաքննության մեթոդներ և հաղորդակցության կառավարում	2
7.	P-CR-018-23	Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում	2

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-CR-003-23	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	10
2.	P-CR-004-23	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	10
3.	P-CR-001-23	Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա	6
4.	P-CR-014-23	Խոցելի խմբերի նկատմամբ կատարված հանցագործությունների քննության առանձնահատկությունները	6
5.	P-CR-010-23	Կալանքի և այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը	6
6.	P-CR-005-23	Հարցաքննության մեթոդներ և հաղորդակցության կառավարում	2

Փաթեթ 3.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-CR-003-23	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	10
2.	P-CR-004-23	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	10
3.	P-CR-007-23	Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր	4
4.	P-CR-013-23	Պետական շահերի պաշտպանության արդի հարցեր	6

5.	P-CR-015-23	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	4
6.	P-CR-016-23	Կիբեռհանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունները	6

Փաթեթ 4.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-CR-003-23	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	10
2.	P-CR-004-23	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	10
3.	P-CR-008-23	Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները	6
4.	P-CR-012-23	Ընտրական հանցագործությունների որակման առանձնահատկությունները	4
5.	P-CR-009-23	Խոշտանգումների քրեաիրավական բնութագիր և քննության առանձնահատկությունները	4
6.	P-CR-017-23	Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր	6

Փաթեթ 5.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-CR-019-23	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	12
2.	P-CR-020-23	Վարչական դատավարության արդի հարցեր	8
3.	P-CR-021-23	Աուդիտորական գործունեության և հաշվապահական հաշվառման հիմնահարցեր	8
4.	P-CR-022-23	Գնումների վերաբերյալ օրենսդրության հիմնահարցեր	6
5.	P-CR-013-23	Պետական շահերի պաշտպանության արդի հարցեր	6

2.1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

Փաթեթ 6.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-CV-001-23	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հիմնահարցեր	12
2.	P-CV-002-23	Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը	8

3.	P-CV-003-23	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում	10
4.	P-CV-004-23	ՀՀ վերաքննիչ, վճռաբեկ և ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ	6
5.	P-CV-005-23	Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում	4

V. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-D-001-23	Փաստարկում և հռետորաբանություն	40
2.	P-D-002-23	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	40
3.	P-D-003-23	Անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական վարույթի ընթացքում	40
4.	P-D-004-23	Երեխաների նկատմամբ բռնության քննության առանձնահատկությունները	40
5.	P-D-005-23	Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղղությունները	40
6.	P-D-006-23	Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը	40
7.	P-D-007-23	Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները	40
8.	P-D-008-23	Միջազգային աշխատանքային իրավունք	40
9.	P-D-009-23	Աշխատանքային իրավունք	40
10.	P-D-010-23	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում	40

Հավելված 2

Արդարադատության ակադեմիայի

կառավարման խորհրդի 2022 թվականի

դեկտեմբերի 15-ի ԿԽ-011/22/3 որոշման

ԾՐԱԳԻՐ

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատախազների 2023թ. հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
3. Ծրագիրը նպատակաուղղված է դատախազների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 6 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:
6. Հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-S-001-23	Հրազենի գործադրման հմտություններ	6

1. P-S-001-22. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատախազների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքները: